ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ
պատմ. գիտ. թեկնածու

ՊԱՏԱՐԱԳՆԵՐԻ ՊԱՏՎԻՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատարագների պատվիրման առանձնահատկությունների ուսումնասիրության հարցում ամենախոսուն եւ հավաստի աղբյուրները, վիմագրերից զատ, նաեւ ձեռագրերն են, ինչպես նաեւ բանահյուսական եւ ազգագրական նյութերը[1]:

Մարդկային մտածողությունն ու պատկերացումները, անտարակույս, իրենց կնիքն են թողնում լեզվի վրա, որը տվյալ ժողովրդի մշակույթի յուրօրինակ արտացոլումն է: Ժողովրդական լեզվամտածողությունը նրա պատմության, կենսահայեցողության, սովորույթների ու ավանդույթների ուրույն հայելին է: Բացի այդ՝ ժողովրդի բանավոր ավանդությունները նույնպես օգնում են պատկերացում կազմելու տարբեր պատմաշրջանների ու աշխարհայացքների մասին:

Հայերենում «ժամ» կամ «պատարագ անել» արտահայտությունն այսպես է բացատրվում. «Ժամասացություն կատարել, պատարագ մատուցել. ննջեցյալի հիշատակին հոգու հաց տալ. ուտելու համար մաս-մաս բաժանել»[2], իսկ «հոգու պատարագ» արտահայտությունը ձեռք է բերել «հոգու հաց» նշանակությունը[3]:

Ըստ «Ազգագրական հանդէս»-ի հատորներում տեղ գտած տվյալների՝ ԺԹ. դարի վերջերին եւ նախորդ դարի սկզբներին հանգուցյալների հիշատակի համար պատարագ հիմնականում մատուցում էին Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, սակայն, կան նաեւ բացառություններ: Այսպես՝ Համշենում ննջեցյալի համար պատարագ չէին անում[4]: Ամեն մի տարածաշրջան հանգուցյալի համար տրվելիք պատարագի հարցում ուներ իր առանձնահատկությու-

1 Պատարագների փոխհատուցման խնդրի քննությանն անդրադարձ ենք կատարել առանձին հոդվածով՝ տե՛ս **Հ. Հակոբյան**, Պատարագների փոխհատուցման խնդիրը, «Ակունք», թ. 1, Երեւան, 2014, էջ 60-64:

2 **Ա. Սուքիասյան, Մ. Գալստյան,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երեւան, 1975, էջ 242:

3 Տե՛ս անդ, էջ 366:

4 **Յ. Մուրադեանց**, Համշենահայեր, «Ազգագրական հանդէս», Ե. գիրք, Թիֆլիս, 1899, էջ 401-402:

նը: Գողթան գավառում, օրինակ, եթե ենչեցյալը մանկահասակ էր, անմիջապես կատարում էին թաղման կարգը եւ տանում գերեզմանատուն, իսկ եթե չափահաս էր, պատարագ էին մատուցում[5]: Գրեթե միանման սովորույթ կար նաեւ Բորչալուի գավառում, ուր չափահասների համար, սովորաբար, պատարագ էին մատուցում, իսկ անչափահասներին եւ մանավանդ աղքատներին՝ առանց պատարագ մատուցելու էին թաղում[6]: Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս տարածաշրջաններին, ապա պետք է նկատել, որ Նախիջեւանում, «Ունեւոր մարդիկ սովորութիւն ունին տարին մի անգամ պատարագ անել տալու իւրեանց մեռելներու հոգուն»[7]:

Հանգուցյալի համար պատարագ պատվիրելու վերաբերյալ հարուստ նյութ կա նաեւ հայ բանահյուսության մեջ, մասնավորապես՝ «Սասնա ծռեր» էպոսում: Պատարագ տալու մասին պահպանված վկայություններն այստեղ շատ արժեքավոր են եւ հավելյալ լույս են սփռում ուսումնասիրվող նյութի վրա:

Այժմ ներկայացնենք մեզ հետաքրքրող վկայությունները. «Դավիթ եւ Միեր» պատումում (գրառող՝ Գարեգին սարկավագ Հովսեփյան (հետագայում՝ Մեծի տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Ա.), ասացող՝ Մոկացի Հովհան) Միերը հիշում է հորեղբորն ու հորը, թաղում է կնոջը եւ Սասմա տան համար պատարագ է անել տալիս. «Ելավ, քառսուն պատարագ ետու ինիլ»[8]: Այս հատվածում հստակ երեւում է, որ պատարագ կարելի է տալ ոչ միայն կոնկրետ հանգուցյալի համար, այլեւ տոհմի, իսկ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ էպոսում «Սասմա տուն» արտահայտությունը ունի նաեւ «Հայոց աշխարհ» իմաստը, կարելի է կարծել, որ պատարագ են տվել նաեւ ողջ երկրի բարօրության համար: Հայտնի է, որ պատարագից հետո եղել է ավանդական հյուրասիրություն, մասնավորապես մասնակիցները հարիսա են պատրաստել ու պատարագից հետո կերել: Այդ մասին տեղեկություններ ենք գտնում նաեւ էպոսի պատումներում: «Նախրչին ըսեց. - Ամպեր, Ըսոր մեր գեղ պատարագ ե, Գնա մեր գեղ, հրիսա կի, Առ ընձի հրիսա, արի՛»[9] (1932թ., գրառող՝ Կարապետ Մելիք-Օհանջանյան, բանասաց՝ Ալաշկերտցի Մանուկ Թորոյան):

---

5 Գողթան գաւառ, «Ազգագրական հանդէս», XII գիրք, Թիֆլիս, 1905, էջ 144-145:

6 **Ե. Լալայեան,** Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 170-171:

7 **Եր. Շահազիզ,** Նոր-Նախիջեւան, «Ազգագրական հանդէս», VII եւ VIII գրքեր, Թիֆլիս, 1901, էջ 102:

8 «Սասնա ծռեր», հտ. Ա., Առաջին մաս, խմբագրեց պրոֆ. դր Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ՝ պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Ցերեւան, 1936, էջ 1240:

9 «Սասնա ծռեր», հտ. Բ., Առաջին մաս, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ՝ պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Ցերեւան, 1944, էջ 66: Հոգեհանգստյան պատարագ տալու մասին տե՛ս նաեւ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. IX, թ. 16, «Անհավատարիմ կնոջ ամոթանքը», Երեւան, 1968, էջ 124-129, ինչպես նաեւ՝ հ. IV, թ. 36, «Սիմոն կուպեցին հեքիաթը», Երեւան, 1963, էջ 320, հ. XVI, թ. 40 «Մանուկ», Երեւան, 2009, էջ 258:

Ինչպես արդեն հայտնի է վիմագրերից ու ձեռագիր հիշատակարաններից, պատարագ ստանալու համար մարդիկ վճարել են: Այդ մասին տեղեկություններ ենք քաղում նաեւ «Ազգագրական հանդէս» - ներից: Այդ տեղեկություններն արժեքավոր են նրանով, որ զուտ ժամանակային առումով դրանք մեզ առավել մոտ են եւ ավելի ընդգրկուն պատկերացում են տալիս պատարագ պատվիրելու հնավանդ սովորույթի աստիճանական զարգացման մասին: Վարանդայում հոգեհանգստյան ճաշից հետո քահանան օրհնում էր հին ու նոր ննջեցյալներին եւ ստանում 40 կոպեկից մինչեւ 1 ռուբլի գումար[10]: Իսկ Ջանգեզուրի գավառում կար մի ամբողջ գնացուցակ՝ կապված թաղման ծախսերի հետ: Ստորեւ ներկայացնում ենք այդ ցուցակը.

«Թաղման ծախսեր. Պատանքի - 50 կ. - 1 ր., Լուսագին եկեղեցուն - 50 կ. - 1 ր., Քահանային՝ մինչեւ 21 տարեկան - 20 կ. - 1 ր., աւելի հասակավորի - 1 ր. - 4 ր., Անբիծքին - 40 կ. - 1 ր., Խաչիամբոյր գանձք ասելիս - 50 կ. - 1 ր., Ժմահացի եւ եօթնից հացի - 30 ր. - 45 ր.: Ընդամէնը՝ 33,10 - 54 ր.»[11]:

Նաեւ այլ գավառների թաղման ծախսերի գնացուցակ կա[12]:

ԺԹ. դարի վերջերին եւ Ի. դարի սկզբներին պատարագ պատվիրում էին ոչ միայն հանգուցյալների հիշատակի համար: Երբեմն այն մատուցվում էր նաեւ մարդկանց մեղքերի թողության ու Աստծո զայրույթը մեղմելու համար: Բնական է, որ մարդկանց շատ ժամանակ պատուհասում էին հիվանդությունները, եղանակային ու բնական աղետները: Ուստի մարդիկ դիմում էին Աստծո բարեգթությանը՝ փորձելով պատարագով «մեղմել» Տիրոջ զայրույթը: Աստծո զայրույթը մարդկանց մեջ ընկալվում էր որպես «Ցասման ժամ»: Այսպես՝ Գարեգին Սրվանձտյանցը «Ցասման ժամ» արտահայտության համար գրում է. «Յերբ տարաժամ ձյուն կամ կարկուտ տեղա, բերքերուն վնասե. յերբ մարախն ու թրթուրը բույսն ու կանաչը գոսացնեն. յերբ յերաշտություն լինի. յերբ ցավ ու մահ պատահեն մարդոց եւ անասնոց. յերբ երկրաշարժ լինի, եւ ինչ վոր պատահի յերկրին, այն՝ վոր մարդոց ըրածը չե, աստուծո ցասումն կը համարին եւ այդ ցասման դեմն առնելու համար սնահավատ մարդիկ ամբողջ հասարակությամբ մատաղ եյին մորթում եւ ժամ անում: Յեփում եյին «ցասման ճաշ» հաճախ հարիսա, հանում, դնում կալը, կամ հենց բացոթյա յեփում, եւ «ժամ ու պատարագից» հետո ուտում եյին այդ հասարակական մատաղը: Այս սովորությունը գալիս ե խոր հնությունից. նույնիսկ քրիստոնեությունից առաջ, դա կատարվել ե շատ ազգերի կրոն ու հավատքի, կյանք ու կենցաղի մեջ»[13]: Աստծո զայրույթը կամ ցասման ժամը մեղմելու մասին վկայություն

10 Տե՛ս **Ե. Լալայեան,** Վարանդա «Ազգագրական հանդէս», գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 184:

11 **Ե. Լալայեան,** Ջանգեզուր, «Ազգագրական հանդէս», գիրք Դ., Թիֆլիս, 1898, էջ 105:

12 Տե՛ս **Ե. Լալայեան,** Սիսիան, «Ազգագրական հանդէս», գիրք Գ., Թիֆլիս, 1898, էջ 248: Բուլանրխ կամ Հարք գաւառ, «Ազգագրական հանդէս», գիրք Ե., էջ 181:

13 «Մասնա ծռեր», Բ. հատոր, մասն յերկրորդ, խմբագրեց ակադեմիկոս Մ. Աբեղյան, աշխատակցությամբ՝ պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Յերեւան, 1951, էջ 875: Ցասման ժամի

կա նաեւ էպոսի պատումներում. «Մեկ որ լե ելավ առավոտուն Դավիթ, քշեց հորթեր, գնաց, տեսավ, որ տղա չկա, հորթեր չկա: Եդ տղայի գեղ լե ցավ, հիվանդութիւն շատ կընի: Եդ գեղացիք լե պատարագ կենին, աղաչանք կենին, որ Աստված փարատութիւն տա»[14]: Բնական է, որ իրենց մեղքերով էին հավատացյալները «արժանանում» Տիրոջ զայրույթին, ուստի մեղքերը քավելու համար պատարագի պատվիրումը անխուսափելի էր[15]:

Նմանօրինակ վկայություն է պարունակում նաեւ Մոկսից գրառված «Սըլտան Փարիշան» հեքիաթը: Մեզ հետաքրքրող հատվածը հետեւյալն է. «Կըսը. - Մըկա ըստա մընակ կաթիլ էլներ, թըխ կաթեր, մըկա ըստա մընակ մութ էլներ, թըխ մութ էլներ, լա Միրզամահմատ խուըգուտ, արիվուտ մեռնիմ, կը տանիս, ժամ էլ արա ձի (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.), նա կաթիլք թըխ կըտրը: Նուր Միրզամահմատ ժամ արավ մոր խամար, անու կաթիլք փըշում կըտրավ»[16]: Այս հեքիաթում հանգուցյալ մայրը խնդրում է որդուն, որ իր համար պատարագ անի, որպեսզի իր գլխին թափվող կաթիլը կտրվի: Որդին՝ Միրզամահմատը, պատարագ է անում մոր համար, որից հետո կաթիլները սակավ ինչ մեղմանում են:

Ինչպես վերը նշեցինք, պատարագ պատվիրելու շարժառիթները տարբեր էին. պատարագներ էին մատուցում ինչպես հարսանիքի[17], այնպես էլ թշնամիների դեմ հաղթանակն ապահովելու համար: Նման բովանդակությամբ հարուստ է հատկապես «Սասնա ծռեր» էպոսը: Էպոսի տարբերակներից մեկում եպիսկոպոս քեռին, այսինքն՝ Աստծո ու մարդկանց միջեւ միջնորդը, գնում է Աղթամար ժամ-պատարագ է անում, օրհնում է 2 թուր, տալիս Սանասարին ու Բաղդասարին, ու նրանք այդ թրով հաղթում են թշնամիներին. «Գընաց Հախթամար, ժամ-պատարաք երաց, Երկու թուր ոխնեց, Ծածուկ հերողկեց Սանասար, Բաղդասարին, Տրին ուրենց չադրի տակ, պախեցին»[18]: Նույնաբովանդակ է նաեւ էպոսի պատումներից մեկում հանդիպող Երուսաղեմի թագավորի ու իր վեզիրի դրվագը. «Վերցուց թագավոր որ վեզիրին ըսեց. Մեր թա-

---

վերաբերյալ հիշատակություն կա նաեւ «Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումներում. «Որերուց մեկ որ ընկեր անգրցավ. Դավիթ շատ վիրավորավ: Ըդ տղեն լե, մ ասի, ըդոնց գեղ ցասման ժամ ե, պատարագ ե, Տղեն եդ ապով անգցեր եկավ» («Մասունցի Դավիթ կամ Միհերի դուռ», 1873 թ., ասացող՝ Տարոնցի Կրպո, գրառող՝ Գարեգին Սրվանձտյան, «Սասնա ծռեր», Բ. հատոր, մասն յերկրորդ, էջ 21):

14 «Սասնա ծռեր», Բ. հատոր, մասն յերկրորդ, էջ 575-576:

15 Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Հ. Հակոբյան**, Մեղքերի թողության երեւույթի մի առանձնահատկություն միջնադարյան աղբյուրներում, «Ակունք», թիվ 1, Երեւան, 2014, էջ 51-59:

16 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. XVII, թ. 29, «Սըլտան Փարիշան», Երեւան, 2012, հատորը կազմեց, առաջաբանը գրեց եւ տպագրության պատրաստեց Թ. Հայրապետյանը, էջ 389-390: «Թաքավոր գողացող տղան» հեքիաթում թագավորը, իմանալով, որ պետք է մահանա, նախապես հոգեհաց ու պատարագ է տալիս (տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. I, թ. 41, Երեւան, 1967, հատորը պատրաստեց եւ առաջաբանը գրեց Ա. Նազինյանը, էջ 512-514):

17 «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. XIV, թ. 2, Երեւան, 1999, հատորը կազմեց եւ տպագրության պատրաստեց Ա. Ղազիյանը, էջ 40-55:

18 «Սասնա ծռեր», հտ. Ա., Առաջին մաս, էջ 880:

գավորություն իսկի մեկ թագավորուտեն ի չե: - Ըբա, ըսեց, ի՞նչ ենինք վազիր: -Յետ դառնանք, նստինք մեր թախտի վրեն: Ու սկսեցին խեր ու խերյաթ ենել ու պատարագ ենել: Պատարագն որ երեցին, պրծան, Հրեշտակներ սրով, թրով իջան Սենեքերիմի ասքարի մեջ. Ու ջարդեցին ու սպանեցին, ու կոտորեցին»[19] (ասացող՝ Ապարանցի Մուրադ): Յուցանշական է նաեւ ներքոգրյալ պատմությունը, ըստ որի՝ պատարագից հետո Աստծո հրեշտակները անձամբ են թշնամու հետ կռվում ու փրկում Երուսաղեմի վանքում պատսպարված հավատացյալներին. «Սենեքերիմ թաքավոր յոթ տարի կռիվ երեց: Ձեդ քրիստոնեք յախթեց, Տարավ, լցեց Յերուսաղեմա վանքի մեչ: ... Եդ յիրիգուն վարդապետ ըսեց. – Ժողովո՛ւրդ, եգե՛ք պադարաք ենինք, ... Վարդապետ յելավ, պադարաք երեց, Եդոնք Աստվաձ աղաղագ երին, Լացին, ոխպացին, մինչի աղոթրընի դեմ: Հրեղեն սուր Ասծուց եր, Ցընգավ եդ զորքի մեչ...»[20]:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ պատարագ պատվիրելու դրդապատճառները, ըստ բանահյուսական ու ազգագրական աղբյուրների, հետեւյալներն են՝ պատարագ մատուցում էին հանգուցյալների հիշատակի համար, սակավադեպ հարսանիքի ժամանակ[21]: Այն կարելի էր մատուցել նաեւ ողջ երկրի բարգավաճման համար, ինչպես նաեւ մարդկանց մեղքերի թողության ու Աստծո զայրույթը կամ «Ցասման ժամը» մեղմելու համար: Պատարագների մատուցումը շատ հաճախ թշնամիների դեմ հաղթանակն ապահովելու միջոց էր: Վերը նշված պատճառներից, սակայն, ոմանք, օրինակ՝ «Ցասման ժամը», կրում էին դիպվածային բնույթ, քանի որ, բարեբախտաբար, բնական աղետները հաճախադեպ չէին, իսկ մեղքերի թողության դեպքում պատվիրվող պատարագների բնույթը կանոնավոր էր:

Ինչպես արդեն վերեւում ասվեց, նվիրատու-հավատացյալների՝ պատարագ ստանալու փաստը առկա է նաեւ ձեռագիր հիշատակարաններում: Պատարագ ստանալու ակնկալիքով նրանք նվիրում էին նաեւ ձեռագրեր: Անշուշտ, ձեռագիր նվիրելու վերաբերյալ հիշատակությունների հանդիպում ենք ինչպես վիմագրերում, այնպես էլ ձեռագրերում: Ինչպես արձանագրություններում, այնպես էլ հիշատակարաններում նվիրատուները հաճախ նշում են, որ նվիրել են ձեռագիր-մատյան, առավել հաճախ Ավետարան, քանի որ ժողովրդի մեջ Աստվածաշունչը տարածված էր առավելապես Նոր կտակարանի կամ Ավետարանի տեսքով[22], եւ ստացել են որոշակի թվով պատարագներ: Ինչպես օրինակ՝ ներքոգրյալ Ավետարանի հիշատակարանում. «Ի թուիս ՉԼԶ.

19 «Մասնա ծոեր», հտ. Բ., Առաջին մաս, էջ 50:

20 Տե՛ս անդ, էջ 255-256:

21 Օրինակ՝ «Նոր թազադան յոթն օր, յոթ կիշեր թոփով, թվանքյով, սազով-քյամանչով, նաղարա-զուռնով, ժամ-պատարաքյով խարսնիս արիցին». տե՛ս «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. XIV, թ. 2, էջ 55:

22 **Ա. եպս. Ժամկոչյան**, Աստվածաշունչը եւ հայ բանավոր ավանդույթը, Երեւան, 2012, էջ 51:

(1287 թ.), ի տաւն վարդավառին եկին ի յուխտ ի Սուրբ Լուսաւորչիս ... Մեծտիկին ... եւ որդին նորին Ապուլքարամ ... եւ տուին զգեղեցկազարդ Աւետարանս ընծայք ... եւ ... միաբանքս տուաք ի տարին աւր մի պատարագ ... ի տաւնի սուրբ քառասնիցն ...»[23]: Ինչպես նկատում ենք, պատարագը պատվիրված է Վարդավառի կամ Տիրոջ Պայծառակերպության տոնի համար, որի ժամանակ պատարագի պատվիրումը հատկապես զանգվածային բնույթ ուներ, ինչը համահունչ է ուխտատեղիներում մեծաթիվ հավատավորների առկայությանը:

Հավատացյալ հայորդիները, բացի ավետարաններից, նվիրել են նաեւ ճաշոցներ. Դանիել կրոնավորը Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցուն նվիրել է «Ճաշոց» ու ստացել Վարդավառի ու Աստվածածնա տոներին տարեկան երկու պատարագ. «Ի թուիս ՉԿԱ. (1312) սրբազան, կրաւնաւորն Դանիէլ ետ զտարեգիրքս սուրբ Խաչիս Ախթամարայ, յիշատակ հոգոյ իւրոց ...: Եւ սպասաւորք սուրբ Խաչիս յանձն առին, որ յամէն տարի Բ. (2) ժամ առնեն՝ Շահապին, եւ մէկն մաւրն՝ Թամարին, եւ յետ իւրեանց մահուն, զմէկ ժամն՝ Վարդավառի կիրակին՝ Դանիէլին առնեն, եւ զմէկն՝ Աստուածածնի կիրակին՝ Մարիանոյն»[24]. կամ հետեւյալ հիշատակարանինը. «Ի թվիս ՉԿԷ. (1318), ի մեհեկի ամիսն, ի գեղս Աստապար ... Ես՝ մեղուցեալ ծառայս Աստուծոյ Սիմոն աբեղա, որդի Յոհանիսի, ... ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, ի յիշատակութիւն ինձ եւ ծնաւղաց իմոց, եւ ընծայեցի ի Սուրբ Նախավկայն, որ յորժամ զգիրքս վճարեն ի սուրբ աւր պենդակոստէին, ի գալուստ Հոգոյն Սրբոյ ի վերնատունն»[25] :

Հիշատակարաններում կան նաեւ վկայություններ նվիրատուների կողմից պատարագ ստանալու ակնկալիքով վանքին շուրջառներ նվիրելու վերաբերյալ. «Ես՝ ծառայս Աստուծոյ Խաղուպս եւ Մեծխաթունս, որ ի մեր հալալ արդեանցն տվաք յիշատակ ի սուրբ Ամենափրկիչն շուրջառ մի ծիրանի խաւուն, որ քահանա ... յամենայն տարի Դ. (4) պատարագ առնէ ... ի թվ. ՉՁՁ (1336 թ.)»[26]: Հիշատակարաններում նույնպես պատարագ պատվիրող նվիրատուները, ինչպես վիմագրերում, կոնկրետ գումար չեն սահմանել, որպեսզի այդ գումարի ու պատվիրված պատարագի թվի բաժանմամբ հնարավոր լիներ որոշել մեկ պատարագի գինը: Ավետարանի գնի մասին հստակ խոսող հիշատակարաններից է 1292 թվականի այս վկայագիրը. «Ես նուաստ ոգի Դաւիթ վարդապետ Տաթեւացի, ... ստացայ զսուրբ Աւետարանս ի ... հարիւր դահեկան»[27]: Ինչպես երեւում է հիշատակարանից, տվյալ Ավետարանը արժեցել է հարյուր դահեկան: ԺԴ. դարի մեկ այլ հիշատակարանում Ավետարանի գինը «հարյուր

23 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ. դար», Երեւան, 1984, էջ 603:
24 «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» Երեւան, 1950, էջ 86:
25 Անդ, էջ 148:
26 Անդ, էջ 299:
27 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ. դար», էջ 685:

սպիտակ» է. «Ես՝ աղախին եւ ծառայ տեառն Աստուծոյ Սուզայ, աւգնական եղէ ի գին սուրբ աւետարանիս Ճ. (100) սպիտակ, եւ խնդրեցի, զի յամենայն ամի Ա (1) աւր պատարագաւ յիշեսցէ զիս Տէրունական»[28]: Հայտնի է, որ սպիտակն արծաթ փողն էր: Այն վերեւի օրինակում հոմանիշն է դահեկանին, հետեւապես վերջինս արծաթե դրամն էր, որ շրջանառվում էր այդ ժամանակ:

Սկսած ԺԴ.-ԺԵ. դարերից, երբ Հայաստանը ենթարկվում է վաչկատունների հարձակումներին, եկեղեցիները նույնպես սկսում են թալանվել: Եկեղեցական սրբազան սպասքի հետ մեկտեղ գողանում էին նաեւ ծիսական գրքերը՝ ավետարանները, մաշտոցները, ճաշոցները եւ այլն: Ավարառու ասպատակիչները լավատեղյակ էին քրիստոնյաների համար դրանց կարեւորությանը եւ այդ քայլին դիմում էին՝ գողացված մատյանները հետագայում հայերին վաճառելու շահադիտական նպատակով: Ու քանի որ այդ գրքերը կրոնական հսկայական նշանակություն են ունեցել հայերի համար, դրանց առեւանգումը անվանել են հաճախ նաեւ «գերեվարություն»[29]: Հետագա դարերում նույնպես ձեռագրերը «գերեվարվել» են: Այս է պատճառը, որ նմանատիպ հիշատակարանները վերոնշյալ դարերում հաճախադեպ են: Որպես օրինակ, վկայակոչում ենք ԺԴ. դարի հետեւյալ հիշատակարանը. «Ի թվ. Հայոց ՉՂԶ (1347) գողացան զսուրբ Աւետարանս ի սուրբ Կարապետէս եւ տարան ի գեղն, որ կոչի Լուսորմ: Զոր տեսեալ պատուական քահ[անայն] Կիրակոս, եւ գնեց զսայ ի յարդար ընչից իւրոց, եւ ետ վերստին ի սուրբ Կարապետս, ի յիշատակ իւր, եւ ծնողաց իւրոց, եւ ամենայն արեան մերձաւորաց:... Ես՝ Ստեփանոս հայրապետս, ու այլ միաբանք, որ ուխտեցաք ի սուրբ Կարապետս, որ յամէն տարի ի սուրբ Կարապետի տաւնին զպատարագն իւրենց առնենք»[30] ,կամ ԺԵ. դարի հետեւյալ վկայագիրը. «Թուվ[ականին] Հայոց ՋԺԷ. (1468), զի գողացան զԱւետարանս եւ տարան յԵրզնկայն: ... Ես՝ Առաքել քահանայս, ... դարձուցի ի գերութենէ զսուրբ Աւետարանս եւ բերի յիմ բնիկ գեղն՝ ի Թացու: Ե. (5) տարի յայլոց ձեռն եկաց: Շատ լալով ու դառնութեամբ շուրջ եկի հետ Աւետարանիս, Է. (7) ամիս ի դուս կացի՝ ապա գտի [Մ. (200) կարմիր գին տուի]»[31]:

Հաճախ ձեռագիրը գերությունից ազատելը կամ հետ գնելը անվանվել է «թափել». «Ես՝ նուաստ Մշեցի Դաւիթ ... յիշեցի թէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն, եւ ընտանեաց նորա յԵրուսաղէմ, եւ իմ հալալ արդեանց տվի Մ. (200)

28 «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 67:

29 Հաճախ ավետարանները նույնիսկ երգներում հայտնվել են, խնդրել ու հրահանգել են իրենց ազատել կամ փրկագնել՝ նույնիսկ սպառնալով. «Խնամի Զարդարը հիշում է, թե Օսկե կող ու Կարմիր Ավետարանները տերտերներուն էրազ կուգան թե՝ մեզի մեր տեղը – մեր օթեւանը տարեք, թե չէ աչքերդ կը հանենք». այդ մասին տե՛ս **Հ. Մարության**, «Տան սուրբ» երեւույթը. Ակունքների հարցը եւ մերօրյա դրսեւորումները, Հայոց սրբերը եւ սրբավայրերը, Երեւան, 2001, էջ 339:

30 Անդ, էջ 356:

31 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԵ. դարի», մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 277:

դեկան, եւ թափեցի զսուրբ աւետարանս, եւ դարձուցի ի ս. Կարապետ...: ...Ի թվ. Հայոց ՊԾԷ. (1408), որ թափեցի»[32]: Ինչպես երեւում է հիշատակարաններից, ձեռագիրը գերությունից ազատելու համար վճարել են, ու թեպետ հաճախ ենք հանդիպում հիշատակարանների, որոնցում հավատացյալը ուղղակի որոշակի փրկագնով ազատում է ձեռագիրը գերությունից, առավել հաճախ Ավետարանը, ինչպես օրինակ՝ հետեւյալ հիշատակարանում. «... խոջա Գորգ ... ազատեցին ի գերութենէ զսուրբ աւետարանս: Եւ ետուն ի գին նորա ՌԵՃ. (1500) դր[ամ] մերտնցի»: ՊՀԳ. (1424)»[33], բայց դրա դիմաց պատարագ չի ստանում[34]:

Ձեռագրերում պատարագ խնդրելու մասին մեզ հանդիպած ամենաուշ վկայագրերից մեկը պահպանվել է Մաշտոցյան Մատենադարանի թ. 5457 Ավետարանի հիշատակարանում՝ Շատախ գավառի Հակե վանքում գրված: Հիշատակարանը բերում ենք ամբողջությամբ, քանի որ այն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում. «273ա(274բ) ... Ամէնաւրհնեալ եւ հոգիացեալն ի գործս բարեաց, բարեսէր եւ հաւատարիմ եւ աստուածապաշտ եւ երկիւղած յԱստուծոյ քահանայապետն եւ սրբասէր եպիսկոպոսապետն Սիրապիոն, որ ըստացաւ զանառիկ (275ա) մեծութիւնս եւ զըփարթամ հարըստութիւնս ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ բարեպաշտ ծնաց (այսպէս) իւրոց

32 «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԵ. դարի», մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1958, էջ 277:

33 Անդ, էջ 89:

34 Տե՛ս «ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին՝ 1401-1450 թթ.. «Արդ, ես՝ Դաւիթս գնեցի զսուրբ աւետարանս ի հազար եւ ի հարիւր դրամ, ... ի թվ. ՊԾՋ. (1407) » (էջ 83): «զՍարգիս աբեղայս, որ գնեցի զսուրբ աւետարանս ... Ներսէս իրիցոյ՝ որդոյ Սարգսէն ճ. (100) թանկայ...»: Սրա պապը՝ Էլբեգին, 1382 թվականին, տեսնելով Ավետարանը «ի ձեռն այլասեռից ի գերութիւն», գնել էր այն՝ վճարելով 100 դահեկան: (անդ, էջ 131): «... Մարտիրոս՝ Աբրայհամու որդի, ... աւետարանս ծախեցի Յակոբ քահանային՝ Ռ. (600) դահեկան... : ... ի թվ. Պ[Կ]Բ. (1413)» (անդ, էջ 161): ԺԵ. դարի 2-րդ կեսի հիշատակարանից՝ «... ես՝ խոջայ Ջանգիշա, ստացայ եւ գնեցի զսուրբ աւետարանս ... ի ճՁ. (180) շախռուխի...»: (անդ, էջ 228): «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԵ. դարի», մասն երկրորդ՝ 1451-1480 թթ., Աւետարան. «Ես՝ մղտեսի Կիրակոս, որդի մղտեսի Պեհնամին, վաղֆ արի իմ ամէն ազգիս վերայ ...: Ի յոր տեղ որ կենայ, նա աւագ հինգշաբթին աւուրն զպատարագն մեր ննջեցելոցն մատուցանեն. եւ խնամ տանաւորին զաւրհնութիւն ի սուրն Աւետարանէս առնուն: Ի թվին Հայոց ՋԳ. (1454), նոյեմբեր ԺԱ. (11) » (էջ 49): «Ի թվականութեանս Հայոց ՋԺԵ. (1466)- ին, ի հայրապետութեանն տեառն Ըռըստակէսի, ... ես Յովաննէս՝ որդի պարոն Մանուկին, գնեցի զսուրբ Աւետարանս ի Յովաննէս իրիցուէ, ... ՌԲՃ. (1200) սպ[իտակ]...» (անդ, էջ 252-253): «Սբ. Աւետարանս անարժան էրէցս Ջուղայեցի, ... առաքեցի զսա ի յերկիրն Վասպուրական, ... մոտ ի վարդապետն Ստեփանոս, ի յանապատն Լիմ, ... եւ նա տուեալ զգին սորա ԾԵ. (55) դռուշ ...» ,«Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ» (1621-1640 թթ.), Բ. հատոր, կազմ.՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երեւան, 1978, էջ 633):

հաւրն՝ ***Հալիֆին***[35], մաւրն՝ ***Մեղուշին***[36] եւ քրւերն՝ **Խազրավարդին**[37] (սակավադեպ հանդիպող անձնանուններ են. ընդգծումը մերն է՝ Հ. Հ.) եւ հաւր եղբարց Յովսէփին, Մարտիրոսին, Կիրակոսին, հօրքորոչ՝ Մարեմին, Մրուաթին, Դօլաթին, Շնախորին եւ այլ արեան ամենայն մերձաւորաց իմոց կենդանեաց եւ հանգուցելոցն առ հասարակ ողորմի Քրիստոս Աստուած. Ամէն: ***Եւս առաւել ի ժամ սուրբ եւ սոսկալի հաշտարար եւ մեղսաքաւիչք պատարագին յիշել զմեզ ջերմեռանդ սիրով առաջի*** (ընդգծումը մերն է՝ Հ. Հ.) զենլոյն Քրիստոսի, զի եւ զձեզ յիշեսցէ Քրիստոս յարքայութեան իւրում. Ամէն: Եւ արդ, ես ունայնս եւ հաշեալս եւ մաշեալս, անգէտս, ի գիտնաւորացդ, անկարգս ի կարգաւորացդ, անարհեստ եւ ափարաճիւ եւ ներգեւեալ եւ իմ անընդունակ գոլով յանձն առի Սրապիոն կրաւնաւոր, որ ան//(275բ)ուամբս եմ եւ գործովս ոչ, տեսի զըսէր եւ զփափաք բարեսէր քահանայապետն Սրապիոն եւ իմովս յիմարութեամբս կատարեցի հոգւոյ յիշատակ Սրապիոն եպիսկոպոսին եւ ծնաւղացն նորին, հաւրն՝ Խալիֆին եւ մաւրն Մեղուշին եւ քորոջն՝ Խազրավարդին, եւ հաւրեղբարցն՝ Յովսէփին, Մարտիրոսին, Կիրակոսին եւ հօրքորոջք՝ Մարեմին, Մրուաթին, Դովլաթին, Շնահորին եւ Աստուած ողորմի ասացէք նոցա. Ամէն: Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս այս ի յերկիրն Շատխոյ, ի վանքն Յակէոյ, ի դուռն Սուրբ Սարգսի Զաւրավարին, ի հէրպետութիւն Սիրապիոն եպիսկոպոսին, ի հայրապետութիւն սուրբ աթոռոյն փոքր Գրիգորիսի, ի թուականիս մերոյ ՌԽԵ (1596) ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որ այլազգիքն զօրացեալ են ի վերայ քրիստոնէիցս հարկապահանջութիւն անհուն է եւ անհամար փախըստական յաշ//(276ա)խարհէ յաշխարհ...»[38]:

Այսպիսով՝ կարելի է գալ հետեւյալ մտահանգումներին. պատարագ ստանալու համար վանքերին ու եկեղեցիներին են նվիրաբերվել ավետարաններ, ճաշոցներ, շուրջառներ, եկեղեցական սպասք եւ այլն[39]: Եւ հակառակը՝ գերե-

35 «Խալիֆայ» բառի ձեւափոխված տարբերակն է: Քրիստոնյաների համար նշանակում է «վարդապետ, թեմական առաջնորդ»: Տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հատոր 2, **Հր. Աճառյան**, Երեւան, 1944, էջ 454: Բառի ճիշտ տարբերակը «խալիֆ» ձեւն է, քանի որ «խալիֆայ» բառի վերջին ա –ն, այդ բառին տալիս է «կին-խալիֆ» իմաստը (ա-ն արաբերենում իգականակերտ վերջածանց է): «Խալիֆ» արաբ. նշանակում է փոխարինող, փոխանորդ, այսինքն՝ ալլահի (Աստծո) տեղապահը երկրի վրա: Վերոնշյալ մանրամասները ու մի շարք այլ դիտարկումներ մեզ բանավոր զրույցի ժամանակ ասել է պ. գ. թ., վիմագրագետ, արաբագետ Ա. Մանուչարյանը, որի համար երախտապարտ ենք նրան:

36 «Մեղր» բառից կազմված փաղաքշական ու հազվադեպ հանդիպվող անուն: Տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հատոր 3, Հր. Աճառյան, Երեւան, 1946, էջ 315:

37 «Հազարվարդ» անվան բարբառային ձեւն է, որը նշանակում է «հազար թերթերով վարդ»: Գործածվել է ԺԳ. դարից սկսած. տե՛ս անդ, էջ 11:

38 Մ.Մ. անվան Մատենադարան, ձեռագիր թ. 5457, էջ 273ա (274բ)– 276ա:

39 Պատարագ պատվիրելու մասին բազում են նաեւ մատենագրական տվյալները, մասնավորապես՝ Սյունյաց արքեպիսկոպոս Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի մեջ կա քննարկվող խնդրին առնչվող շատ կարեւոր մի տեղեկություն, որտեղ խոսվում է Կիլիկիայի թագավոր Լեւոն Գ.-ի՝ Տաթեւի վանքից պատարագ ստանալու մասին. «Ցաղագս այսր յուսոյ եւ սիրոյ աստուածազօր թագաւորին եղբայրութեամբս կարգեցաք զօր

վարված ավետարանները, այլ ձեռագրեր ու սպասք վերադարձնելու համար անձը կարող էր պարգեւատրվել պատարագով: Հետագայում սրբազան բովանդակությամբ գրքերի սերնդեսերունդ փոխանցելը, «գերեվարվելու» դեպքում նույնիսկ ողջ գյուղով գումար հավաքելը՝ Ավետարանը «փրկագնելու» համար, պայմանավորված էր, թերեւս, այդ ավետարանների «Տան սուրբ» Ավետարան լինելու հանգամանքով[40]:

РЕЗЮМЕ

Для изучения особенностей проблемы заказа божественной литургии самые надежные источники кроме эпиграфического материала это еще и рукописи, а также фольклорные и этнографические материалы. Причины заказа литургии, согласно фольклорным и этнографическим источникам нижеследующие: литургию подносили в память о погибших, редко во время свадьбы. Ее можно было поднести еще и для достижения процветания всей страны, а также прощение грехов и для смегчения Божьего гнева или «Часа ярости». Подношения литургии часто являлось способом победы над врагами. Для получения литургии монастырям и церквам дарили Евангелия, отрывки из Библии, читаемые во время обеда (ճաշոցներ), ризы, церковную утварь и т.д. И наоборот, возвращения «плененных» Евангелей, других рукописей и церковной утварьи награждалось литургией.

SUMMARY

To study the features of the divine liturgy order problems, the most reliable sources besides epigraphic material are also manuscripts, as well as folklore and ethnographic materials.The reasons of the liturgy's order, according to folklore and ethnographic sources are the followings: the liturgy was brought in memory of the dead, rarely during the wedding. It could also be brought to achieve flourishing of the whole country, as well as for the forgiveness of sins and for the God's mollification or " Hour of fury". The liturgy's tribute was often a way to defeat enemy. Gospel, passages from the Bible, read during lunches (lectionaries), liturgical vestments, church utencils , etc. were given to monasteries and churches in order to receive liturgy. And conversely, the return of the "captured" Gospels, other manuscripts and church utensil were rewarded with liturgy.

սրբոյ Ջատկի Յարութեան միաշաբթուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան», «Պատմութիւն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1912, էջ 436:

40 Տե՛ս **Հ. Մարության**, «Տան սուրբ» երեւույթը. Ակունքների հարցը եւ մերօրյա դրսեւորումները, Երեւան, 2001, էջ 343-344: